Atlant 30MQD արտաքին կուտակիչ
Շահագործման հրահանգ

Շնորհակալ ենք Atlant 30MQD արտաքին կուտակիչը ձեռք բերելու համար: Նախքան օգտագործելը՝ խնդրում ենք ուշադիր ուսումնասիրել տվյալ հրահանգը:

Սպեցիֆիկացիա.

Տարողունակությունը	30000 Մաժ
Մարտկոցի տեսակը	Լիթիում պոլիմերային
Մուտքային լարում, հոսանք	Micro USB: 5Բ/2Ա, 9Բ/2Ա, 12Բ/1.5Ա USB Type-C: 5Բ/2Ա, 9Բ/2Ա, 12Բ/1.5Ա
Ելուստային լարում, հոսանք, USBx2	5V/3A, 9V/2A, 12V/1.5A, 4.5V/5A, 5V/4.5A
Ելուստային լարում, հոսանք, Type-C	5V/2.4A, 9V/2.22A, 12V/1.67A, 4.5V/5A, 5V/4.5A
Արտաքին կաղապար	Ալյումինե ձուլվածք
Չափսը, մմ	140 x 66.5 x 39 մմ
Քաշը, գ	599 գ
Արտաքին կուտակիչի լիցքավորման ժամանակը	13-14 ժ

Լիակազմը՝

1. Արտաքին կուտակիչ՝ 1 հատ
2. Շահագործման հրահանգ՝ 1 հատ
3. Լիցքավորման համար USB Type C լար՝ 1 հատ

Արտաքին տեսք.



Համար	Անվանում	Նկարագիր
1	Միացման ստեղն	Սեղմեք՝ արտաքին կուտակիչը միացնելու համար: Սարքն ավտոմատ կերպով անջատվում է 30 վայրկյան անգործությունից հետո:
2	Ուցադրումը	ցույց է տալիս արտաքին մարտկոցի լիցքավորման մակարդակը
3	Micro USB մուտք	Ելուստ՝ արտաքին կուտակիչը արտաքին սնուցման աղբյուրից լիցքավորելու համար:
4	USB Type-C մուտք	Ելուստ՝ արտաքին կուտակիչը արտաքին սնուցման աղբյուրից լիցքավորելու համար:
5	USB Ելուստ 1	Ելուստ՝ արտաքին կուտակիչից սարք լիցքավորելու համար:
6	USB Ելուստ 2	Ցույց է տալիս արտաքին կոիտակիչի լիցքավորման մակարդակը:

Արտաքին կուտակիչի լիցքավորումը.

Լիցքավորման մալուխի մեկ ծայրը միացնել հոսանքին. ադապտերին* կամ համարգչի : USB պորտին, իսկ մյուսը՝ արտաքին կուտակիչի մուտքային պորտին.



*Լիցքավորման սարքը ձեռք է բերվում առանձին:

Արտաքին կուտակիչի միջոցով սարքերի լիցքավորումը.

Սարքերը արտաքին կուտակիչի միջոցով լիցքավորելիս՝ օգտագործեք միայն օրիգինալ մալուխ: Հարկավոր է նախ միացնել արտաքին կուտակիչը: Լիցքավորման ընթացքը երևում է ցուցանիշների միջոցով: Լիցքավորման մալուխի մեկ ծայրը պետք ՝ միացնել արտաքին կուտակիչի ելուստային պորտին, իսկ մյուսը՝ ձեր սարքի մուտքային պորտին (Apple կամ Android):



Արտաքին կուտակիչի միացում եւ անջատում.

Արտաքին կուտակիչը միացնելու համար, սեղմեք սնման ստեղնը և միացրեք ձեր սարքը արտաքին կուտակիչին: Արտաքին կուտակիչն անջատելու համար, սեղմած պահեք սնման ստեղնը երեք վայրկյան:

Կուտակիչի լիցքի պատկերը.

Արտաքին մարտկոցի լիցքը ցուցադրելու համար Այն հագեցած է էկրանով, որը ցույց է տալիս սարքի առավելագույն լիցքավորման հզորության տոկոսը:

Ուշադրություն. Արտաքին կուտակիչը հարկավոր է լիցքավորել, երբ լիցքի մակարդակը 25%-ից պակաս է: Երբ կուտակիչն ամբողջությամբ լիցքավորվում է, չորս ցուցանիշն էլ լույս են արձակում: Կուտակիչը պաշտպանված է գերլիցքավորումից: Պաշտպանությունն ակտիվանում է գերլիցքավորման, գերլիցքաթափման, հոսանքի գերլարման, կարճ միակցման վտանգի դեպքում:

Աշխատանքային ջերմաստիճան՝ –2 մինչև 40 °C; պահպանման ջերմաստիճան՝ –10 մինչև 45 °C:

Լիցքավորման սարքի միացման/ անջատման ցուցանշում.

Արտաքին կուտակիչին այլ սարք միացնելիս՝ ցուցանշումը միանում է ավտոմատաբար: Սարքն անջատելուց հինգ վայրկյան հետո, այն մարում է, եթե չի միացվում այլ սարք:

Եթե արտաքին կուտակիչը ստեղների սեղմելուն կամ այլ սարքերին միանալուն չի արձագանքում, ապա այն հարկավոր է լիցքավորել:

Անվտանգության վերաբերյալ նշումներ.

Տվյալ սարքը սնուցվում է հատուկ կուտակիչից: Նրա ոչ նպատակային կիրառումը կարող է ստեղծել հրդեհման, պայթյունի և այլ արտակարգ իրավիճակների վտանգ: Խնդրում ենք կուտակիչը օգտագործել պատշաճ կերպով:

Արգելվում է կազմատել, բացել, ծալել, ծակել, ենթարկել կուտակիչը մեխանիկական ազդեցության և այն ջրի մեջ սուզել: Վնասման դեպքում կուտակիչը կարող է պայթել: Էլեկտրոլիտի հոսակորուստի դեպքում, հարկավոր է անմիջապես լվանալ վնասված հատվածը ջրով և դիմել բժիշկին: Եթե մարտկոցից տարօրինակ հոտ է գալիս, տեղադրեք այն անվտանգ, կրակից հեռու վայրում: Վնասված կուտակիչի օգտագործումը կարող է հանգեցնել լուրջ վնասվածքներին:

Կուլ չտա՛լ:

Պահպանե՛լ երեխաներից հեռու:

Ամբողջությամբ լիցքավորված կուտակիչը պետք չէ՛ սարքին միացված թողնել: Դա կրճատում է նրա ծառայողական ժամկետը: Չօգտագործելու դեպքում կուտակիչը ապալիցքավորվում է:

Սարքը չկազմատե՛լ, թույլ չտա՛լ կարճ միակցում: Պահպանել կուտակիչի մետաղյա կոնտակտների մաքրությունը:

Սարքը չթողնե՛լ և չպահե՛լ մեքենայի մեջ շոգ եղանակին՝ արևի ճառագայթների տակ: Դա կարող է բերել կուտակիչի գերտաքացմանը, ինչը նվազեցնում է մարտկոցի օգտագործման ժամկետը: Ջերմաստիճանային նորմերի խախտման դեպքում կիրառելիս՝(-10°C-ից ցածր և 45°C-ից բարձր) սարքը կարող է անջատվել կամ ոչ լիակատար սպառել ունակությունը:

Կուտակիչը պարունակում է ծանր տոքսիկ մետաղներ, ինչպես օրինակ սնդիկ, կադմիում և կապար:

Օգտագործված կուտակիչը հարկավոր է օգտահանել համապատասխան կերպով:

Օգտահանեք այն կենցաղային թափոններից առանձին, որպեսզի ծանր մետաղները չթափնցեն հողի, ստորգետնյա և մակերեսային ջրերի մեջ:

Կուտակիչը չվառե՛լ՝ ծանր մետաղների օդ ներթափանցումից և ծխի ու մոխրի մեջ կուտակվելուց խուսափելու համար:

Բնական ռեսուրսների պահպանման համար առանձնացրեց կուտակիչը այլ թափոններից և հանձնեք այն վերամշակման:

Ապրանքի տեղափոխումը կատարվում է արտադրողի փաթեթավորման մեջ, տրանսպորտային բոլոր միջոցներով և ցանկացած հեռավորության վրա:

AccesStyle առևտրային նշանի երաշխիքային պայմանները.

1. Ներոհիշյալ բոլոր երաշխիքային պայմանները գործում են Ռուսաստանի Դաշնության օրենսդրության սպառողական ապրանքների առևտուրը կարգավորող օրենքներին համապատասխան:
2. Երաշխիքային ժամկետը սկսվում է գնման պահից և կազմում է 1 (մեկ) տարի:
3. Ծառայողական ժամկետը կազմում է 2 (երկու) տարի և սկսվում է գնման ժամկետից, կամ՝ վերջինիս բացակայության դեպքում, արտադրման ժամկետից;
4. Երաշխիքը չի ընդգրկում.
   4.1. Մալուխներ, հարմարակներ, տարբեր տիպի ինֆորմացիայի կրիչները (դիսկ, ձայնագրված ծրագրերով հիշողության քարտեր), պատյաններ, տեղափոխման համար լարեր, պնդակներ, տարբեր տիպի ամրակներ, փաթեթավորում և փաստաթղթեր:
   4.2. Նորմալ մաշվածք կամ սարքի արտաքին մակերեսների վնասվածքներ: Խոնավության, էքստրեմալ ջերմաստիճաններով, ԳՀՀ էներգիայով, ճնշմամբ, հարվածով, կենդանիների, միջատների գործողություններով, սնունդի, հեղուկի փոշու, քիմիական նյութերի ազեցությամբ պայմանավորված վնասվածքներ:

4.3. Սարքի վերանորոգում կամ ձևափոխում այլ անձանց կողմից՝ բացառությամբ 5-րդ կետում նշվածների:
4.4. Ոչ իր ուղիղ գործառույթով կիրառված սարք, նաև շահագործման հրահանգի մեջ նկարագրված կիրառման կանոնների խախտմամբ սարք:
4.5. Անհամատեղելի սարքավորումների կամ աքսեսուարների կիրառման հետևանքով առաջացած թերություններ:

5. Երաշխիքային սպասարկումը կատարում են համապատասխան լիազորված կազմակերպությունները՝ պաշտոնական սպասարկման կենտրոնները, որոնց ցուցակը հասանելի է տեխնիկական աջակցման կայք էջի վրա http://www.accesstyle.ru և 8-800-250-07-17 հեռախոսահամարով: Երաշխիքային շրջանի ընթացքում արտադրական թերությունների շտկումը կատարվում է գնորդի համար անվճար՝ լրացված երաշխիքային կտրոնի և/կամ գնման փաստն ու ամսաթիվը հաստատող փաստաթղթեր (ՀԴՄ կտրոն) ներկայացնելիս: Փաստաթղթերը պետք է պարունակեն սարքի մոդելը, վաճառքի ամսաթիվը, առևտրային կազմակերպության տվյալները: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում լիազորված կազմակերպությունը իրավունք է վերապահում չկատարել երաշխիքային սպասարկումը:
6. Երաշխիքային ժամկետը երկարեցվում է երաշխիքային սպասարկման տևողությանը համապատասխան: Պահեստամասերի կամ սարքի լիակազմի ամբողջական փոխման դեպքում ո՛չ սարքն ամբողջությամբ, ո՛չ էլ փոխված պահեստամասերը նոր երաշխիքի ենթակա չեն:
7. Արտադրողը, Ներկրողը կամ նրա կողմից լիազորված կազմակերպությունները պատասխանատվություն չեն կրում պատահական, ուղիղ կամ անուղղակի վնասվածքի կամ վնասի համար՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով միայն վերոյիշյալով, բաց թողնված շահույթը, կորուստը կամ ինֆորմացիա կամ տվյալներ օգտագործելու անկարողությունը կամ տվյալների, ծախսերի, ինֆորմայիայի վերականգնման հետ կապված ծախսերը, որոնք առաջացել են կոմերցիոն, արտադրական կամ այլ գործունեության դադարեցման արդյունքում ՝ կապված AccesStyle սարքը կիրառելու կամ օգտագործելու անկարողության հետ:

Երաշխիքային կտրոն

Սարքը գնելու ժամանակ պահանջեք ստուգել այն ձեր ներկայությամբ և լրացնել երաշխիքային կտրոնը: Առանց կտրոնի ներկայացման կամ նրա սխալ լրացման դեպքում, որակի հետ կապված բողոքները չեն ընդունվում և երաշխիքային սպասարկումը չի կատարվում:

Ապրանքի անվանում._____

Սերիական համար._____

Վաճառքի
ամսաթիվ. _____

Վաճառողի
ստարագրություն._____

Առևտրային կազմակերպության անվանումը և հասցեն. _____

Ստորագրություն՝
Վաճառող

Ապրանքի որակը ստուգվել է իմ ներկայությամբ, բողոքներ չկան: Սարքը՝ ամբողջական լիակազմով և շահագործման հրահանգով ստացել եմ, երաշխիքային պայմանների հետ ծանոթ և համաձայն եմ.

_____Գնորդի ստորագրություն